ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

**ք. Սպիտակ** **05/12/2024**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14
# ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 անդամներ:

Բացակա էին՝ Մանուշ Աթյանը, Արկադի Ասատրյանը, Վաչիկ Գրիգորյանը, Կարինե Դիլաքյանը, Նունե Էհտիբարյանը, Համլետ Մազմանյանը, Վարազդատ Մխիթարյանը, Քաջայր Նիկողոսյանը, Գագիկ Սահակյանը, Սամվել Սիմոնյանը, Արամայիս Փիլոյանը, Գուրգեն Փիլոյանը

**Համայնքի ղեկավարի առաջին տեղակալի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**
Հովիկ Հովհաննիսյան, Ազգանուշ Ֆրանգյան, Երեմ Գրիգորյան, Գոռ Աշուղաթոյան, Արմեն Պապոյան

**Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Արտակ Մաթոսյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ազգանուշ Ֆրանգյանը**

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 5-ի հերթական նիստի օրակարգը.

1)Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 12-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

/Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

2)Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2025 թվականի հերթական նստաշրջանների նիստերի օրերը հաստատելու մասին

/Զեկուցող՝ Ա.Ֆրանգյան/

3)Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, Սպիտակ համայնքի Մեծ Պարնի բնակավայրի վարչական տարածքում գտնվող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

/Զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

4)Արամ Սամվելի Մանուկյանին կառուցապատման իրավունքով պատկանող հողամասի կառուցապատման իրավունքի ժամկետը երկարաձգելուն համաձայնություն տալու մասին

/Զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

5)Հայաստանի Հանրապետությանը հողամաս նվիրելուն համաձայնություն տալու մասին

/Զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

6)Հայաստանի Հանրապետությանը հողամաս նվիրելուն համաձայնություն տալու մասին

/Զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

7)Հայաստանի Հանրապետությանը հողամաս նվիրելուն համաձայնություն տալու մասին

/Զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

Օրակարգի քվեարկությունից առաջ աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Ե. Գրիգորյանը հանդես եկավ առաջարկությամբ. առաջարկեց օրակարգի վերջին հարցը հանել օրակարգից և փոխարենը օրակարգ ներառել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 144-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագիծը՝ հիմնավորելով, որ համայնքի ավագանու նախորդ՝ 2024 թվականի նոյեմբերի 12-ի նիստի ժամանակ տեխնիկական վրիպակի պատճառով անհրաժեշտություն է առաջացել վերոնշյալ հարցը ներառել օրակարգ:

Ե. Գրիգորյանի առաջարկությունը՝ օրակարգում ընդգրկված «Հայաստանի Հանրապետությանը հողամաս նվիրելուն համաձայնություն տալու մասին» 7-րդ հարցի նախագիծը օրակարգից հանելու մասին, դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-2

Համայնքի ավագանու անդամներ Վ. Թումանյանը և Ս. Փիլոյանը ձեռնպահ քվեարկեցին:

Այնուհետև Ա. Մաթոսյանն առաջարկեց օրակարգում ներառել նոր՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի

նոյեմբերի 12-ի թիվ 144-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 7-րդ հարցի նախագիծ, և առաջարկությունը դրվեց քվեարկության:

Կողմ-11 Դեմ-2 Ձեռնպահ-12

Համայնքի ավագանու անդամներ Վ. Թումանյանը և Գ. Մարգարյանը դեմ քվեարկեցին, իսկ Ս.Փիլոյանը ձեռնպահ քվեարկեց նախագծին:

Նիստը վարողը օրակարգը՝ հետևյալ հարցերով, դրեց քվեարկության.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 5-ի հերթական նիստի օրակարգը.

1)Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 12-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

2)Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2025 թվականի հերթական նստաշրջանների նիստերի օրերը հաստատելու մասին

3)Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, Սպիտակ համայնքի Մեծ Պարնի բնակավայրի վարչական տարածքում գտնվող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

4)Արամ Սամվելի Մանուկյանին կառուցապատման իրավունքով պատկանող հողամասի կառուցապատման իրավունքի ժամկետը երկարաձգելուն համաձայնություն տալու մասին

5)Հայաստանի Հանրապետությանը հողամաս նվիրելուն համաձայնություն տալու մասին

6)Հայաստանի Հանրապետությանը հողամաս նվիրելուն համաձայնություն տալու մասին

7)Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 144-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 152/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 12-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱԶԳԱՆՈՒՇ ՖՐԱՆԳՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի քաղաքական, վարչական, հայեցողական պաշտոնների և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի աշխատողների կառուցվածքը, քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի պաշտոնների անվանացանկը հաստատելու առաջարկի և Սպիտակ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 61-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 12-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Օրակարգի 1-ին հարցի զեկուցման ժամանակ նիստին ներկայացավ ավագանու անդամ Նարինե Հակոբյանը և հարցի քվեարկությանը մասնակցեց 15 ավագանու անդամ:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 153/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՆԻՍՏԵՐԻ ՕՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱԶԳԱՆՈՒՇ ՖՐԱՆԳՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2025 թվականի հերթական նստաշրջանների նիստերի օրերը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 154/

Լսեցին

***ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԵՐԵՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 11032020-06-0045 վկայականը՝ Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի Մեծ Պարնի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, 06-075-0240-0010 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,7108 հեկտար մակերեսով գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը, չորանոց կառուցելու նպատակով, աճուրդով օտարելուն:

2. Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գին սահմանել 7 186 188 ՀՀ դրամ (1 քմ 1 011 ՀՀ դրամ):

3. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցից համայնքի բյուջե գանձել հողամասի պետական գրանցման ծախսերը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 155/

Լսեցին

***ԱՐԱՄ ՍԱՄՎԵԼԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԵՐԵՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, 481-ին հոդվածի 4-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով 2009 թվականի դեկտեմբերի 22-ի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիրը (գրանցված սեղանամատյանում N 2351), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13112024-06-0054 վկայականը, Արամ Սամվելի Մանուկյանի 2024 թվականի նոյեմբերի 6-ի

դիմումը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Արամ Սամվելի Մանուկյանին կառուցապատման իրավունքով պատկանող 06-006-0499-0040 կադաստրային ծածկագրով 0,002 հեկտար մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի ժամկետը 15 տարով երկարաձգելուն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 156/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԵՐԵՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28032024-06-0073 վկայական՝ տրված 29 հունվարի 2021 թվականին), «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Խնկոյան փողոց 134 հողամաս» հասցեում գտնվող 06-006-0490-0004 կադաստրային ծածկագրով 0,34471 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրելուն:

Կողմ-11 Դեմ-1 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 157/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԵՐԵՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27072021-06-0011 վկայական՝ տրված 27 հուլիսի 2021 թվականին), «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ ք. Թումանյան փողոց 100 հողամաս» հասցեում գտնվող 06-006-0058-0017 կադաստրային ծածկագրով 0,92834 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրելուն:

Կողմ-13 Դեմ-1 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 158/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 144-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԵՐԵՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավականակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 12-ի «Սերյոժա Ռաֆիկի Սարգսյանին, Տիգրան Սերյոժայի Սարգսյանին և Հերմինե Հարությունի Հարությունյանին ուղղակի վաճառքով հողամաս օտարելուն համաձայնություն տալու և ուղղակի վաճառքի գին սահմանելու մասին» թիվ 144-Ա որոշման 1-ին կետում «Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող» բառերից հետո գրված «Մարզ Լոռի, համայնքի Սպիտակ Սպիտակ ք. Դ.Տեր-Սիմոնյան փողոց 3/4 բնակելի տուն» բառերն ու թվերը փոխարինել «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Դ. Տեր-Սիմոնյան փողոց 3/5 հողամաս» բառերով ու թվերով:

Կողմ-12 Դեմ-1 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 159/

Ավագանու անդամներ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱՋԱՐՅԱՆ

ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳԱՍՈՅԱՆ

ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ

*Համայնքի ղեկավարի ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝*

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ _____

*Նիստն արձանագրեց՝* Ազգանուշ Ֆրանգյանը _____